

Զ Ե Կ Ո Յ Ց

ԳԱԼՈՒՍՏ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ ԴԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

1967-68 Տարեշրջանի Համալսարանական Կրթաքոչակներ

1.— Դալուստ Կիւլպենկեան Հիմնարկութիւնը 1967-68 ուսումնական տարեշրջանին համար եւս որոշ թիւով կրթաթոշակներ պիտի յատկացնէ արժանաւոր հայ ուսանողներու:

2.— Կրթաթոշակներու յատկացումը պիտի կատարուի քննութեամբ, հայկական ծագում ունեցող ուսանողներու՝ որոնք իրենց քնակալայրին եւ կամ այլ երկրի մը կրթական հաստատութիւններէն մէկուն մէջ բարձրագոյն ուսման հետեւելու համար զուրկ են նիւթական անհրաժեշտ միջոցներէն: Սկզբունքով Հիմնարկութիւնը չի փոփոխեր հովանաւորել ուսանողներ՝ որոնք իրենց բարձրագոյն ուսման կ'ուզեն հետեւիլ հետաւոր երկիրներու համալսարաններուն մէջ: Շատ բացառիկ պարագաներու տակ է միայն որ կրթաթոշակներ կրնան յատկացուիլ այս վերջիններուն՝ եթէ նախընտրուած մասնագիտութեան կայելի չէ հետեւիլ տեղական համալսարաններու մէջ:

3.— Թեկնածուները պարտին լրացնել համալսարանական մասօրի անհրաժեշտ բոլոր պայմանները եւ քնուանուած ըլլալ նուազագոյն «Սօփոմօր» դատարանը կամ յաջորդութեամբ անցուցած՝ Բ. կարգի «Պալալորիա»-ի քննութիւնները:

4.— Ընտրութիւնները պիտի կատարուին այն թեկնածուներէն միայն՝ որոնք ունին ուսումնական բարձր մակարդակ: Ընտրական Յանձնախումբը տեսնցմէ կ'ընտրէ իր դատարարութեամբ արժանաւորագոյն նկատուած թեկնածուները միայն:

5.— Թեկնածուները իրենց մեծագիւր դիմումագիրը պէտք է ներկայացուցած ըլլան ստորեւ նշանակուած հասցէներէն մէկուն (պարագային համաձայն) ամենէն ուշ մինչեւ 31 Մայիս, 1967: Ի պատասխան՝ թեկնածուներուն կը զրկուին հարցաթերթիկներ՝ որոնք ճշգրտօրէն լցնուելէ ետք, պահանջուած փաստաթուղթերուն հետ պէտք է վերադարձուին Հիմնարկութեան ներկայացուցիչ մարմիններուն եւ կամ Լիզպոնի Կեդրոնին, ամենէն ուշ մինչեւ 31 Յուլիս, 1967: (Հարաւային Ամերիկայի երկիրներուն, ինչպէս նաեւ Աւստրալիոյ համար այս թուականները պիտի ըլլան յաջորդաբար 15 Դեկտեմբեր 1967 եւ 15 Փետրուար 1968):

6.— Հիմնարկութիւնը սահմանափակ թիւով կրթաթոշակներու համար նկատի պիտի ունենայ նաեւ դիմումներ թեկնածուներէ՝ որոնք արդէն տիրացած են համալսարանական վկայականի մը եւ կը փոփոխեն կատարելագործել իրենց ուսումը իրենց քնակած երկրին կամ արտասահմանի կրթական բարձրագոյն հաստատութիւններէն մէկուն մէջ: Նախընտրութիւնը պիտի տրուի արժանաւորագոյն թեկնածուներէն անոնց՝ որոնք նախապէս օգտուած չեն քնաւ Հիմնարկութեան կրթաթոշակներէն: Դիմումները պէտք է կատարուին վերոյիշեալ մեծով դարձեալ եւ նկատի պէտք է առնուին նախ պայմանաժամերը:

7.— Ներկայացուած դիմումները ի վերջոյ պիտի կեդրոնացուին Լիզպոն՝ ուր Հիմնարկութեան Ընտրական Յանձնախումբը իր վերջնական որոշումները պիտի տայ Օգոստոս-Սեպտեմբեր ամիսներու ընթացքին: (Հարաւային Ամերիկայի երկիրներուն եւ Աւստրալիոյ պարագային՝ Փետրուարի վերջը): Յանձնախումբին որոշումները թեկնածուներուն պիտի հաղորդուին ուղղակի Լիզպոնի Կեդրոնէն:

Տ.— Դիմումները պէտք է ուղարկուին հետևեալ հասցէներուն.

Ա.— Լիբանան բնակող բեկմածուններուն համար,

Educational Committee of the Calouste Gulbenkian Foundation in the Lebanon,
Stephan Building,
Riad Solh Street,
Beirut — Lebanon.

Բ.— Սուրիա բնակող բեկմածուններուն համար,

Mr. K. Nersoyan,
P. O. Box 757,
Aleppo — Syria.

Գ.— Ֆրանսա բնակող բեկմածուններուն համար,

Comité des Boursiers Arméniens de la Fondation Calouste Gulbenkian,
51 Avenue d'Iéna,
Paris XVIe — France.

Դ.— Անգլիա բնակող բեկմածուններուն համար,

The Secretary,
Calouste Gulbenkian Foundation,
U. K. & British Commonwealth Branch,
98 Portland Place,
London W 1 — England.

Ծ.— Վերսիլեանեան տարրեր երկիրներ բնակող քեկնածուններ, ինչ ալ ըլլայ իրենց հպատակութիւնը, պէտք է դիմեն ուղղակի Հիմնարկութեան Կեդրոնին, հետևեալ հասցէով,

Calouste Gulbenkian Foundation,
Department of Armenian Affairs,
Scholarships Selection Committee,
Avenida de Berna, 45-A,
Lisboa — 1, Portugal.

10.— Ներկայ ուսումնական տարեշրջանին Հիմնարկութեան համայնաբանական հրթրթռչակ ստացող ուսանողներ իրենց հրթրթռչակները 1967/68 տարեշրջանին վերանորոգել տալու համար պարտին իրենց դիմումները յղել ուղղակի Հիմնարկութեան Կեդրոնին՝ ստանալու համար հարկ եղած հարցաթերթիկները՝ որոնք ամբողջացուելէ ետք պէտք է վերադարձուն Լիզպոն՝ ամենէն ուշ մինչեւ 15 Յուլիս, 1967: (Հարաւային Ամերիկայի եւ Աւստրալիայ պարագային մինչեւ 15 Փետրուար, 1968:)

ԴԱՆՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

1 Մարտ 1967. Լիզպոն.